

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«Գյոււմրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

06.07.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 42-ը (քառասուններկու):

### ՕՐԱԿԱՐԳ՝

#### 1. Տնտեսագիտության ամբիոնի վարիչի ընտրություն:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան,

մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

#### 2. Գիտական կոչումներ շնորհելու հարց.

➤ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Գ. Ամբարդարյան (*պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդ*):

➤ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ս. Զաքարյան (*դոցենտի գիտական կոչման հավակնորդ*):

➤ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Ա. Հայրապետյան (*դոցենտի գիտական կոչման հավակնորդ*):

➤ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մ.գ.թ. Շ. Սարգսյան (*դոցենտի գիտական կոչման հավակնորդ*):

Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

#### 3. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման տարակարգի բնութագրիչների հաստատում:

Զեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով

պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

**4. ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ՊԴ կազմի վարքագծով պայմանավորված գնահատման սանդղակի քննարկում:**

**Զեկ.**՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

**5. ԳՊՄԻ-ի ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու մասին:**

**Զեկ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

**6. Ընթացիկ հարցեր:**

**6.1** «Բյուրեղային նյութերում կառուցվածքային արատների հայտնաբերման նոր ռենտգենադիֆրակցիոն մեթոդների և տեխնիկական միջոցների մշակումը» գիտական թեմայի երաշխավորման հարցը, որը ներկայացվելու է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի № 540 - Ա/Ք հրամանով հայտարարված թեմատիկ ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթին: Թեմայի գիտական ղեկավար՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Ռ. Դրմեյան:

**Հաղ.**՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

**6.2** ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի N 540-Ա/Ք հրամանի համաձայն՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվող «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու համար ԳՊՄԻ-ի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ա.գ.թ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի ներկայացրած

«Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» թեմայի հայտին հավանության արժանացնելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտր Ա. Ֆարմանյան

**6.3** ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի N 540-Ա/Ք հրամանի համաձայն՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվող «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու համար ԳՊՄԻ-ի կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Արմենակի Ստեփանյանի ներկայացրած «Նախասրտերի շողացումով հիվանդների մոտ ռիսկի գործոնների գնահատումը և բարդությունների կանխարգելումը Շիրակի մարզում» թեմայի հայտին հավանության արժանացնելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտր Ա. Ֆարմանյան

**6.4** Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս Գայանե Սաշիկի Հարությունյանի «Ֆրանսիայի երկրագիտությունը» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտր Ա. Ֆարմանյան

**6.5** Հոգեբանության ամբիոնի ասիստենտ Արմինե Երվանդի Թադևոսյանի «Սոցիալ-հոգեբանական ուսուցման ակտիվ մեթոդներ»

վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

**Հաղ.**՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտր Ա. Ֆարմանյան

**6.6** ԳՊՄԻ-ում բժշկի հաստիք ստեղծելու մասին:

**Հաղ.**՝ Ռեկտոր Վ. Գրիգորյան

**6.7** Հրավիրյալ դասախոսների 1 լսարանային ժամի համար վարձատրման չափը սահմանելու մասին:

**Հաղ.**՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿԱԿՆՈՒՄ** – 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**1.ԼՍԵՑԻՆ.- Տնտեսագիտության ամբիոնի վարիչի ընտրություն:**

Ինստիտուտի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանի հաղորդմամբ՝ տնտեսագիտության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, տ.գ.թ. Արթուր Հովհաննեսի Մկրտչյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակը զբաղեցնելու համար դիմած թեկնածուի ինքնակենսագրությունը, վերջին 5 տարիների ընթացքում նրա հրատարակած գիտական աշխատանքների թիվը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Կազմակերպել տնտեսագիտության ամբիոնի վարիչի ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը փակ գաղտնի քվեարկության կարգը գիտական խորհրդի անդամներին ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և արդյունքներն ամփոփելու նպատակով:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Խաչատրյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Մկրտչյան Արթուր	36	4	2

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. Տ.գ.թ. Արթուր Հովհաննեսի Մկրտչյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2.ԼՍԵՑԻՆ.-** **Գիտական կոչումների շնորհման հարցը:** Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի ու պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

**Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդ՝**

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Գայանե Հենրիկի Ամբարդարյան	Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ	Ժ.02.02 – «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»

**Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներ`**

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Սուսաննա Հրանտի Զաքարյան	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	Ժ.02.01 – «Հայոց լեզու»
2.	Աստղիկ Հրաչի Հայրապետյան	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	Ժ.02.01 – «Հայոց լեզու»
3.	Շողիկ Հրաչի Սարգսյան	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ	ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա /հայոց լեզու/»

Գիտական կոչումներ շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վալերի Խաչատրյան, Հենրիկ Դրմեյան և Անգին Գրիգորյան:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Գայանե Հենրիկի Ամբարդարյան	32	9	1
2.	Սուսաննա Հրանտի Զաքարյան	38	2	2
3.	Աստղիկ Հրաչի Հայրապետյան	36	4	2
4.	Շողիկ Հրաչի Սարգսյան	36	4	2

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաշվի առնելով, որ Գայանե Հենրիկի Ամբարդարյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ պրոֆեսորի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (6ա), ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա Գայանե Հենրիկի Ամբարդարյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան վկայագրով:

2. Հաշվի առնելով, որ Սուսաննա Հրանտի Զաքարյանի, Աստղիկ Հրաչի Հայրապետյանի ու Շողիկ Հրաչի Սարգսյանի ներկայացրած գործերը լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և

դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա Սուսաննա Հրանտի Զաքարյանին, Աստղիկ Հրաչի Հայրապետյանին ու Շողիկ Հրաչի Սարգսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան վկայագրով:

**3.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման տարակարգի բնութագրիչների հաստատում:**

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց վերոնշյալ փաստաթղթի ելակետային դրույթները՝ մշակված գիտխորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման տարակարգի բնութագրիչները:

**4.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ՊԴ կազմի վարքագծով պայմանավորված գնահատման սանդղակի քննարկում:**

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց փաստաթղթի էությունն ու կառուցվածքը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ՈԱԿ-ի տնօրեն Ն. Ավետիսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** ՊԴ կազմի վարքագծով պայմանավորված գնահատման սանդղակի էության, կառուցվածքի բարելավման նպատակով՝ հանձնարարել ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների վարիչներին առաջիկա երկու շաբաթվա ընթացքում առաջարկությունների մշակումն ու Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանին ներկայացումը:



**5.ԼՍԵՑԻՆ.-** Ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու մասին: Ռեկտոր Վ. Գրիգորյանը ներկայացրեց ուսումնական պլանների փոփոխությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1.Բաղդատել «Հայոց լեզու և գրականություն» դասընթացը / I կուրս, I և II կիսամյակ, 4 կրեդիտ, 64 լսարանային ժամ/ 2 առանձին դասընթացների՝ «Հայոց լեզու» /I կուրս, I կիսամյակ/ ու «Հայ գրականություն» /I կուրս, II կիսամյակ/ առանձին դասընթացների՝ անփոփոխ թողնելով լսարանային ժամերը:

2.Կրճատել «Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)» /I կուրս՝ II կիսամյակ, II կուրս՝ I ու II կիսամյակ, 6 կրեդիտ, 96 լսարանային ժամ/ դասընթացի I կուրս, II կիսամյակի կրեդիտները՝ անփոփոխ թողնելով դասընթացի ընդհանուր լսարանային ժամաքանակը: Կատարված փոփոխության արդյունքում «Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)» դասընթացի /II կուրս՝ I և II կիսամյակ 4 կրեդիտ, 96 լսարանային ժամ/ կրեդիտներն ու լսարանային ժամերը բաշխել հետևյալ կերպ.

ա) II կուրս, I կիսամյակ - 2կրեդիտ, 48 ժամ

բ) II կուրս II կիսամյակ - 2կրեդիտ, 48 ժամ:

«Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)» դասընթացի I կուրս II կիսամյակում ավելացած 2 կրեդիտը բաշխել հետևյալ կերպ.

➤ 1 կրեդիտը տրամադրել «Հայ գրականություն» դասընթացին՝ անփոփոխ թողնելով լսարանային ժամաքանակը,

➤ 1 կրեդիտը տրամադրել «Հայոց պատմություն» դասընթացին՝ անփոփոխ թողնելով լսարանային ժամաքանակը:

3.Բաղդատել «Մանկավարժություն» դասընթացը /II կուրս, II կիսամյակ, 4 կրեդիտ, 64 լսարանային ժամ/ 2 առանձին դասընթացների՝ «Մանկավարժություն» / II կուրս, II կիսամյակ՝ 2 կրեդիտ 48 լսարանային ժամ/ և «Գիտելիքների գնահատում» /II կուրս, II կիսամյակ՝ 2 կրեդիտ 32 լսարանային ժամ/:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**6.ԼՍԵՑԻՆ.-** Ընթացիկ հարցեր:

**6.1 ԼՍԵՑԻՆ.-** Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը «Բյուրեղային նյութերում կառուցվածքային արատների հայտնաբերման նոր ռենտգենադիֆրակցիոն մեթոդների և տեխնիկական միջոցների մշակումը» գիտական թեմայի երաշխավորման հարցի մասին, որը ներկայացվելու է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի № 540 - Ա/Ք հրամանով հայտարարված թեմատիկ ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթին: Թեմայի գիտական ղեկավար՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Ռ. Դրմեյան:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Հ. Սարգսյանը, ԳՊՄԻ-ի Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դոցենտ Ա. Ժ. Ֆարմանյանը և ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաշվի առնելով, որ վերոնշյալ թեմայով գիտահետազոտական աշխատանքներն իրականացվելու են ԳՊՄԻ-ի ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնում, որն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա և ապահովված է ներկայացված գիտական թեմային

քաջատեղյակ ու բարձրորակ մասնագետներով՝ ունակ ամբողջովին իրականացնելու նշված թեմայով հետազոտական ծրագիրը, ուստի գիտական խորհուրդը երաշխավորում է թեմայի վերոնշյալ նախագիծը հայտարարված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման մրցույթին մասնակցելու ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտեի առջև:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**6.2 ԼՍԵՑԻՆ.-** Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի N 540-Ա/Ք հրամանի համաձայն՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվող «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու համար ԳՊՄԻ-ի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ա.գ.թ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի ներկայացրած «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» թեմայի հայտին հավանության արժանացնելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան, կ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1. Նկատի ունենալով ԳՊՄԻ-ի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ա.գ.թ., դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանի ներկայացրած «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ)

բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» թեմայի հայտի արդիականությունն ու հիմնարարությունը՝ ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդն իր հավանությանն արժանացրեց ներկայացված ծրագիր-հայտը:

2. ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդը երաշխավորում է «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» թեման ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի N 540-Ա/Ք հրամանի համաձայն՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվող «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**6.3 ԼՍԵՑԻՆ.-** Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի N 540-Ա/Ք հրամանի համաձայն՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվող «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու համար ԳՊՄԻ-ի կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Արմենակի Ստեփանյանի ներկայացրած

**«Նախասարտերի շողացումով հիվանդների մոտ ռիսկի գործոնների գնահատումը և բարդությունների կանխարգելումը Շիրակի մարզում» թեմայի հայտին հավանության արժանացնելու մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան, կ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1.Նկատի ունենալով ԳՊՄԻ-ի կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Արմենակի Ստեփանյանի ներկայացրած «Նախասարտերի շողացումով հիվանդների մոտ ռիսկի գործոնների գնահատումը և բարդությունների կանխարգելումը Շիրակի մարզում» թեմայի հայտի արդիականությունն ու հիմնարարությունը՝ ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդն իր հավանությանն արժանացրեց ներկայացված ծրագիր-հայտը:

2.ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդը երաշխավորում է «Նախասարտերի շողացումով հիվանդների մոտ ռիսկի գործոնների գնահատումը և բարդությունների կանխարգելումը Շիրակի մարզում» թեման ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հունիսի 4-ի N 540-Ա/Ք հրամանի համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվող «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» գիտական թեմաների հայտերի մրցույթին մասնակցելու համար:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**6.4 ԼՍԵՑԻՆ.-** Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս Գայանե Սաշիկի Հարությունյանի «Ֆրանսիայի երկրագիտությունը» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս Գայանե Սաշիկի Հարությունյանի «Ֆրանսիայի երկրագիտությունը» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 42 անդամ. կողմ` 42, դեմ` 0, ձեռնպահ` 0:

**6.5 ԼՍԵՑԻՆ.-** Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը հոգեբանության ամբիոնի ասիստենտ Արմինե Երվանդի Թադևոսյանի «Սոցիալ-հոգեբանական ուսուցման ակտիվ մեթոդներ» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հոգեբանության ամբիոնի ասիստենտ Արմինե Երվանդի Թադևոսյանի «Սոցիալ-հոգեբանական ուսուցման ակտիվ մեթոդներ» վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 42 անդամ. կողմ` 42, դեմ` 0, ձեռնպահ` 0:

**6.6 ԼՍԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանի հաղորդումը ԳՊՄԻ-ում բժշկի հաստիք ստեղծելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Ստեղծել ԳՊՄԻ-ում բժշկի հաստիք` 160 000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ աշխատավարձով:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ –** 42 անդամ. կողմ` 42, դեմ` 0, ձեռնպահ` 0:

6.7 ԼՍԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը հրավիրյալ դասախոսների 1 լսարանային ժամի համար վարձատրման չափը սահմանելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հրավիրյալ դասախոսների 1 լսարանային ժամի համար սահմանել վճար՝ 1340 (հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենքով նախատեսված հարկերը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 42 անդամ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ